ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 2011-2013 ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

1.1. Եվրոպական և Եվրոատլանտյան կառույցների ու հաստատությունների հետ համագործակցության խորացում

Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական նպատակը եվրոպական քաղաքական, տնտեսական և հասարակական կառույցներին ու հաստատություններին հետագա ինտեգրումն է: Հայաստանը նաև մտադիր է աշխուժացնել գործնական և քաղաքական համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ՝ Դաշինքին ավելի մերձենալու նպատակով: Այս առնչությամբ կարևոր գործիքներ կհանդիսանան Պաշտպանական հաստատությունների կառուցման գործընկերության գործողության ծրագիրը (ՊՀԿ ԳԳԾ), Պլանավորման և վերանայման գործընթացը, ինչպես նաև Դաշնակիցների հետ խորհրդակցությունները:

1.2. Հարաբերություններ հարևանների հետ

Հայաստանը ցանկանում է նպաստել Կովկասում տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանը և հաստատակամ է կառուցողական աշխատանք տանել իր հարևանների հետ հարաբերությունների զարգացման և բարելավման ուղղությամբ: Հայաստանը հանձնառու է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը և լիովին աջակցում է այդ խնդրում ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերին: Հայաստանը հաստատակամ է կարգավորել Թուրքիայի հետ հարաբերությունները՝ առանց նախապայմանների:

1.3. Ժողովրդավարություն, օրենքի գերակայություն, պայքար կոռուպցիայի դեմ և մարդու իրավունքներ

Հայաստանը հաստատակամ է հետագա առաջընթաց ապահովելու ժողովրդավարական բարեփոխումների, մարդու իրավունքների պաշտպանության, օրենքի գերակայության, թափանցիկության, մամուլի ազատության և կոռուպցիայի դեմ պայքարի գործում: Հայաստանը մտադիր է ամրապնդել ժողովրդավարական հաստատություններն ու գործընթացները՝ իրագործելով քաղաքական, դատական և ընտրական բարեփոխումների համապարփակ փաթեթը՝ Եվրոպայի Խորհրդի, Եվրոպական Միության, ԵԱՀԿ և այլ միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ: Հայաստանը գիտակցում է, որ առաջընթացը կախված է

բարեփոխումների արդյունավետ իրագործումից և այդ իմաստով հաստատակամ է ակտիվացնել իր ջանքերը: Հայաստանը գիտակցում է նաև երկրում տարբեր քաղաքական ուժերի միջև կառուցողական երկխոսության խթանման անհրաժեշտությունը: Հայաստանը հաստատակամ է կոռուպցիայի դեմ պայքարում և մտադիր է գործնական միջոցներ ձեռնարկել՝ թափանցիկ և լայն հիմքերով պատասխանատվության մեխանիզմների հաստատման ուղղությամբ, կատարելագործել պետական պաշտոնյաների ուսուցումն ու իրազեկումը, և հակակոռուպցիոն օրենքների գործնական կիրառումը:

1.4. Պաշտպանության և անվտանգության ոլորտների ժողովրդավարական վերահսկողություն, զինվորական արդարադատություն, մարդու իրավունքները Զինված ուժերում

Հայաստանը հանձնառու է զարգացնել և ամրապնդել Զինված ուժերի ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողությունը: Հայաստանը մտադիր է նաև նպաստել քաղաքացիական մասնակցությանը պաշտպանական և անվտանգության քաղաքականության մշակման գործում: Այդ առումով Հայաստանը հատկապես կարևորում է պաշտպանության և անվտանգության հարցերում քաղաքացիական հասարակության ընդգրկման քաջալերումը, ինչպես նաև խորհրդարանականների և նրանց անձնակազմերի կրթության և ուսուցման բարելավումը: Հայաստանը հաստատակամ է նաև ապահովելու սահմանադրական և մարդու իրավունքների պաշտպանությունը Զինված ուժերում և աշխատանքներ է իրականացնելու կրթությունը բարելավելու, մարդու իրավունքներով զբաղվող անկախ մարմիններն ուժեղացնելու, կարգապահական կանոնադրությունը սահմանադրական պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

1.5. Պայքար ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ, կիբեր-պաշտպանություն

Հայաստանը հաստատակամ է հզորացնել ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի իր կարողությունները՝ ներառյալ միջգերատեսչական համագործակցության բարելավմամբ: Հայաստանը նաև մտադիր է հզորացնել իր կարողությունները ահաբեկչության և կազմակերպված հանցավորության հետևանքների կառավարման նպատակով: Հիմնվելով այս բնագավառում ՆԱՏՕ-ի հետ առկա համագործակցության վրա՝ Հայաստանը պատրաստ է ավելի ակտիվորեն ներգրավվել համապատասխան ծրագրերի և միջոցառումների, հատկապես Ահաբեկչության դեմ պայքարի գործընկերության գործողության ծրագրի, ներառյալ համապատասխան հետախուզական տեղեկատվության փոխանակումը, իրականացման գործընթացում: Միջազգային իրավական գործիքների կիրառմամբ, Հայաստանը մտադիր է նաև հետագա օրենսդրական ու գործնական միջոցներ ձեռնարկել՝ ուղղված կազմակերպված հանցավորության դեմ պայքարի և կիբեր հարձակումներից կապի և տեղեկատվական կարևոր համակարգերի պաշտպանության բարելավմանը:

1.6. Սահմանային անվտանգություն

Հայաստանը Սահմանային անվտանգության ռազմավարության իրականացման նպատակով մշակել է գործողությունների ծրագիր: Այն ներառում է անվտանգության գործնական հրահանգների և ընթացակարգերի բարելավում, բարելավված վարժանքներ, անձնակազմի կառավարում, ֆինանսական պլանավորում և առաջնահերթ սարքավորումների հատկորոշում:

1.7. Տնտեսական զարգացում

Հայաստանը ձգտում է առողջ, կայուն և տևական տնտեսական զարգացման: Հայաստանի առաջնահերթություններն են՝ եվրոպական չափանիշների համաձայն թափանցիկ շուկայական տնտեսվարման իրագործումը, տրանսպորտային ենթակառույցների և արտաքին տրանսպորտային կապերի զարգացումը և զանազանեցումը, հուսալի և տարաբնույթ էներգետիկ պաշարների մատակարարման ապահովումը, օտարերկրյա ներդրումների խրախուսումը, և պետական ֆինանսական ռեսուրսների և (կամ) օտարերկրյա օգնության ոչ նպատակային օգտագործման կանխումը:

1.8. Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ

Հետամուտ լինելով Եվրոպական կառույցներին ու հաստատություններին ինտեգրման իր նպատակին, Հայաստանը մտադիր է առավել ընդլայնել իր համագործակցությունը Եվրոպական Միության հետ՝ Արևելյան Գործընկերության շրջանակներում և, բանակցվող Ասոցիացման համաձայնագրի ընձեռած հնարավորությունների լիարժեք օգտագործման միջոցով, ձգտում է առավել սերտ ինստիտուցիոնալ և իրավական համատեղելիության: Հայաստանը կշարունակի համագործակցել նաև ԵԱՀԿ-ի և Եվրոպայի խորհրդի հետ և հաստատակամ է այս կազմակերպությունների համապատասխան չափանիշները կիրառելու գործում: Հայաստանը գիտակցում է երկրում գործող տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների կրկնորդումը և համընկնումը նվազեցնելու անհրաժեշտությունը:

2. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

2.1. Պաշտպանության և անվտանգության բարեփոխում

Հայաստանը սկսել է իրականացնել Պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքները, որոնք առավել ճշգրիտ, համադրված և համաձայնեցված ուղեցույցներ են ապահովում անվտանգության և պաշտպանության ոլորտների հետագա բարեփոխումների և ՀՈՒ զարգացման համար: Պաշտպանության և անվտանգության ոլորտների բարեփոխման նպատակների իրականացմանն օժանդակող լրացուցիչ կարևոր լծակներ կհանդիսանան Պլանավորման և վերանայման գործընթացն (ՊՎԳ) ու Պաշտպանական հաստատությունների կառուցման գործընկերության գործողության ծրագիրը (ՊՀԿ ԳԳԾ): Ազգային անվտանգությանը քաղաքականությանը և դրան առնչվող փաստաթղթերի համատեքստում Հայաստանը նաև նախատեսում է

պաշտպանության ոլորտում առաջնորդվել վերափոխված ռազմավարական ուղեցույց փաստաթղթերով՝ սպառնալիքների վերանայված գնահատման եզրակացությունների և ռազմավարական պլանավորման նկատառումների հիման վրա:

2.2. Պաշտպանական պլանավորում

Հայաստանը ձգտում է կատարելագործել պաշտպանական պլանավորման և բյուջետային համակարգերի արդյունավետությունը, ինչպես նաև մշակել կայուն, թափանցիկ և ֆինանսական առումով մատչելի պաշտպանական պլաններ: Այդ նպատակով Հայաստանը մտադիր է այս բնագավառներում հիմնել փորձագիտական համակարգ, ինչը կօգնի Պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքների իրագործմանը, ինչպես նաև ղեկավարման և կառավարման, սպառազինության և ռազմական տեխնիկայի ու նյութատեխնիկական ապահովման ոլորտների կատարելագործմանը: Հայաստանը սկսել է բարեփոխել իր ռազմարդյունաբերական համալիրը և արտադրությունը՝ հիմնվելով ՀՀ ռազմարդյունաբերության համակարգի բարեփոխումների և զարգացման հայեցակարգի դրույթների վրա: Հայաստանի Հանրապետությունը առավել զարգացնելու է Պաշտպանության նախարարությունում ներդրված քաղաքացիական հատուկ ծառայության ինստիտուտը և շարունակելու է վերանայել անձնակազմի կառավարման համակարգը՝ Պաշտպանության նախարարության և ԶՈՒ Գլխավոր շտաբի զինվորական և քաղաքացիական անձնակազմի համար:

2.3. Ռազմաուսումնական և փոխգործունակության խնդիրներ

Հայաստանը շարունակում է, ՆԱՏՕ-ի չափանիշների կիրառմամբ, մեկ բրիգադի կազմավորումը, և նպատակ ունի այս բրիգադի ստորաբաժանումները գնահատել Օպերատիվ կարողությունների հայեցակարգի (ՕԿՀ) շրջանակներում՝ այդ կերպ դրանք դարձնելով փոխգործունակ և ունակ՝ մասնակցելու ՆԱՏՕ-ի ղեկավարած գործողություններին: Ռազմակրթական հայեցակարգի շրջանակներում, Հայաստանը մտադիր է նաև բարեփոխել իր ամբողջ ռազմակրթական համակարգը, մշակել կրտսեր, ավագ սպայակազմի և պայմանագրային սերժանտական կազմի ուսումնակրթական նոր ծրագրեր, ինչպես նաև վերանայել յուրաքանչյուր զորատեսակի պատրաստության և կիրառման տեսական հայացքները /դոկտրինները/ և ընթացակարգերը: Կուսումնասիրվի նաև ՀՀ ՊՆ ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը ազգային կրթական շրջանակներին միավորելու իրագործելիությունը:

3. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

3.1. Հասարակության իրազեկում

Հայաստանը մտադիր է ընդլայնել ՆԱՏՕ-ի Գործընկերության ծրագրերի, ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի ներգրավվածության և համագործակցության վերաբերյալ հասարակական իրազեկումը: Հայաստանը նաև նպատակադրվել է ընդլայնել

հասարակական իրազեկումը՝ ի աջակցություն պաշտպանական և անվտանգության ոլորտի բարեփոխումների: Երևանում ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոնը շարունակելու է կարևոր գործիք հանդիսանալ այդ գործում և Հայաստանը կշարունակի աջակցել կենտրոնին:

3.2. Գիտություն

Հայաստանը նպաստելու է Հարավային Կովկասի տարածաշրջանում անվտանգության և համագործակցության հաստատմանը՝ մասնակցելով «Գիտություն հանուն խաղաղության և անվտանգության» (ԳԽԱ) ծրագրին:

3.3. Պատրաստվածություն քաղաքացիական արտակարգ իրավիճակներին

Հայաստանը հաստատակամ է բարելավել ճգնաժամերի կառավարման և համակարգման իր ունակությունները, ինչպես նաև արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը՝ աղետներին և ասիմետրիկ սպառնալիքներին դիմակայելու նպատակով: 2008թ-ին ստեղծվեց Արտակարգ իրավիճակների նախարարությունը, և ներկայումս աշխատանք է տարվում ճգնաժամերի կառավարման կենտրոնի ստեղծման ուղղությամբ: Հայաստանը նպատակադրվել է մեծացնել սեփական կարողությունները և ընդլայնել կապերը ՆԱՏՕ-ի Աղետների արձագանքման համադրման Եվրատլանտյան կենտրոնի հետ՝ աղետների հաղթահարման միջազգային գործողություններում իր ներդրումն ունենալու նպատակով:

4. ՎԱՐՉԱԿԱՆ, ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

4.1. Վարչական խնդիրներ

Հայաստանը կապահովի համադրման և կապի հետ կապված բոլոր անհրաժեշտ կանոնակարգերը՝ այս Գործողության ծրագրի արդյունավետ իրագործման համար:

4.2. Պաշտպանողական անվտանգություն

Հայաստանը հաստատակամ է շարունակելու ՆԱՏՕ-ի հետ առկա Անվտանգության համաձայնագրի լիակատար իրագործումը:

4.3. Ռեսուրսներին առնչվող խնդիրներ

Հայաստանը մտադիր է անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսներ հատկացնել՝ այս Գործողության ծրագրով նախատեսված ծրագրերի ու գործողությունների իրականացմանը համապատասխան աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Գլուխ 1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

1.1. Եվրոպական և Եվրատլանտյան կառույցների ու հաստատությունների հետ համագործակցության խորացում

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
1.1.1.	**Ընդլայնել և խորացնել համագործակցությունը Եվրատլանտյան կառույցների ու հաստատությունների հետ**
Գործող. 1.	Որպես ԱԳԳԾ գործընթացի մաս՝ Դաշնակիցների հետ իրականացնել 28+1, ինչպես նաև երկկողմ ձևաչափով քաղաքական կանոնավոր խորհրդատվություններ՝ անվտանգությանը և արտաքին քաղաքականությանը, ինչպես նաև տարածաշրջանային զարգացումներին առնչվող խնդիրների շուրջ:
Գործող. 2.	Ակտիվորեն ներգրավվել Գործընկերությունների, մասնավորապես, ԵԱԳԽ աշխուժացման գործընթացին
1.1.2	**Աջակցել ՆԱՏՕ-ի Գործընկերության Նոր քաղաքականության իրականացմանը**
Գործող. 1	Կազմակերպել սեմինար «ՆԱՏՕ-ի Գործընկերության Նոր քաղաքականությունը. արժեքների խթանում և պրագմատիզմ» թեմայով

1.2. Հարաբերություններ հարևանների հետ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
1.2.1.	**Նպաստել տարածաշրջանային կայունությանն ու անվտանգությանը Կովկասում**
Գործող. 1	ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում աշխատել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ և Դաշնակիցներին տեղեկացնել զարգացումների մասին:
Գործող 2	Տարածաշրջանային անվտանգության հարցերի շուրջ երկխոսության մեկնարկի և բաժանարար գծերի հաղթահարմանն ուղղված հնարավորությունների ստեղծում
Գործող 3	Հետամուտ լինել Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերությունների կարգավորմանը

1.3. Ժողովրդավարական բարեփոխումներ, օրենքի գերիշխանություն, պայքար կոռուպցիայի դեմ, մարդու իրավունքներին առնչվող ընդհանուր խնդիրներ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
1.3.1.	**Ընտրական տեխնոլոգիաներ/Ընտրական բարեփոխումներ**
Գործող. 1	Ընտրական օրենսդրության պատշաճ իրագործում
Գործող. 2	Վերանայել ընտրությունների բողոքարկմանն առնչվող օրենսդրությունը՝ հաշվի առնելով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ առաջարկությունները և ապահովել բողոքարկման բարեփոխված ընթացակարգերի արդյունավետ և անկողմնակալ իրագործումը:
Գործող. 3	Շարունակել զինվորականների բազմակողմանի ուսուցումը ընտրողների իրավունքների, ներառյալ ընտրել կամ չընտրելու նրանց իրավունքի, վերաբերյալ և գործնականում ապահովել հարգանքը դեպի այս իրավունքները
1.3.2.	**Դատավորների անկախություն**
Գործող. 1	Շարունակել բարեփոխումները՝ նպատակաուղղված մասնավորապես դատական համակարգի անկախության բարձրացմանը Ընդունել և իրականացնել նոր քրեական դատավարության օրենսգիրքը
Գործող. 2	Կատարելագործել դատավորների և դատական կատարածուների ուսուցումն ու որակավորումը՝ ներառյալ Դատավորների դպրոցի հետագա զարգացման միջոցով
Գործող. 3	Կատարելագործել դատավորների ընտրության գործընթացը և նշանակման ընթացակարգերը՝ անկախ և որակյալ դատավորների նշանակումն ապահովելու նպատակով
Գործող. 4	Կատարելագործել դատախազների հավաքագրման, նշանակման և ուսուցման՝ ներառյալ նախնական և շարունակվող մասնագիտական զարգացումը, գործող համակարգը
Գործող. 5	Բարելավել արդարադատության հասանելիությունը բնակչության համար, ապահովել դրա անվճար կամ մատչելի լինելը հատկապես սոցիալապես խոցելի խմբերի համար, ներառյալ իրավական օգնության համակարգի բարեփոխման միջոցով
1.3.3	**Մամուլի ազատություն**
Գործող. 1	Ապահովել մամուլի անկախությունը լիցենզավորման և հանրային հեռարձակման կարգավորիչ մարմինների քաղաքական շահերից՝ համաձայն ԵԽ առաջարկությունների, ինչպես նաև ապահովել հանրային հեռարձակման միջոցների լիցենզավորման ընթացակարգերի արդյունավետ իրագործումը
Գործող. 2	Նպաստել հեռարձակվող լրատվամիջոցների անկախությանը, բազմակարծությանը և որակի հետագա բարելավմանն ուղղված միջոցներին

Գործող. 3	Բարձրացնել պետական իշխանության ներկայացուցիչների իրազեկությունը (դատավորներ, դատախազներ և հեռարձակման կարգավորիչ մարմնի աշխատակազմ) ազատ կամարտահայտության, տեղեկացվածության ու ՁԼՄ իրավունքներին առնչվող ԵԽ նորմերի վերաբերյալ
Գործող. 4	Ապահովել ՁԼՄ-ների կողմից իրավական պարտավորությունների կատարումը՝ կապված պետական պաշտոնի համար մրցող թեկնածուների հանդեպ հավասար մոտեցում կիրառելու հետ
1.3.4.	**Հանրահավաքների ազատություն**
Գործող. 1	Ապահովել բոլոր քաղաքացիների հանրահավաքների ազատության իրավունքը՝ ԵԽ և ԵԱՀԿ պարտավորությունների/հանձնառությունների համաձայն
1.3.5	**Պայքար կոռուպցիայի դեմ**
Գործող. 1	Իրականացնել GRECO-ի առաջարկությունները 3-րդ գնահատման զեկույցի շրջանակներում և շարունակել ակտիվ համագործակցությունը MONEVAL-ի հետ
Գործող. 2	Իրականացնել ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և 2009-2012թթ. Կատարողականի Գործողությունների ծրագիրը
Գործող. 3	Ամրապնդել հակակոռուպցիոն օրենսդրության արդյունավետ և անկողմնակալ կիրարկումը
Գործող. 4	Բարելավել կոռուպցիայի մասին իրազեկումը պետական պաշտոնյաների ուսուցման և կրթության ընդլայնման միջոցով
1.3.6.	**Մարդու իրավունքների մասին օրենսդրությունը և սահմանված կարգը**
Գործող. 1	Ապահովել ազգային մակարդակով Մարդու իրավունքների Եվրոպական Դատարանի որոշումների լիարժեք իրագործումը՝ ներառյալ դատավորների, դատախազների և մարդու իրավունքներով զբաղվող պաշտոնյաների իրազեկման և գործնական կարողությունների բարձրացման միջոցով
Գործող. 2	Նպաստել մարդու իրավունքներով զբաղվող անկախ, ոչ դատական մարմինների և կազմակերպությունների ակտիվ համակարգի զարգացմանը
Գործող. 3	Մարդու իրավունքների պաշտպանի կարողությունների ուժեղացում

1.4. Պաշտպանության և անվտանգության ոլորտների ժողովրդավարական վերահսկողություն, զինվորական արդարադատություն, մարդու իրավունքները Զինված ուժերում

Նպատակներ, գործողություններ	**Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ**
1.4.1.	**Մշակել պաշտպանական և անվտանգության բնագավառների օրենսդրական և դատական արդյունավետ ու թափանցիկ վերահսկողություն**
Գործող. 1	Հնարավորինս բարձրացնել օրենսդրական մարմնի դերը պաշտպանական գործունեության վերահսկման գործում՝ բարելավելով Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի, Ֆինանսավարկային, Բյուջետային և

	Տնտեսական հարցերով խորհրդարանական մշտական հանձնաժողովների կարողություններն ու գործունեությունը
Գործող. 2	Քայլեր ձեռնարկել խորհրդարանականների և նրանց անձնակազմերի պաշտպանական գործունեության վերահսկմանը վերաբերող հատուկ կրթության և ուսուցման կատարելագործման ուղղությամբ
Գործող. 3	Ապահովել Քաղաքացիական հասարակության ներգրավումը պաշտպանության բարեփոխումների արդյունավետ իրականացման գործընթացին՝ Պաշտպանության նախարարության, ԱԺ, Հանրային խորհրդի և ոլորտում ներգրավված ոչ կառավարական կամակերպությունների միջև սերտ համագործակցության միջոցով, ինչպես նաև ստանալով ՆԱՏՕ-ի կողմից համապատասխան աջակցություն: Հանրային խորհրդի դերի հետագա զարգացում:
Գործող. 4	Ընդունել վերանայված ՀՈ կարգապահական կանոնադրությունը և ապահովել, որպեսզի կանոնակարգերն ամբողջությամբ համապատասխանեն Հայաստանի Սահմանադրությանը և միջազգայնորեն ընդունված նորմերին ու չափանիշներին
1.4.2.	**Զարգացնել արդյունավետ և թափանցիկ միջոցներ զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության ապահովման նպատակով, խթանել քաղաքացիական մասնակցությանը պաշտպանական և անվտանգության քաղաքականության մշակման գործում, ոչ կառավարական կազմակերպությունների հետ համագործակցությունը, ինչպես նաև պաշտպանական և անվտանգության հարցերում տեղեկատվության՝ հանրության համար պատշաճ հասանելիության ապահովումը**
Գործող. 1	Պաշտպանության նախարարությունում և անվտանգության ոլորտի այլ նախարարություններում ու գերատեսչություններում շարունակել քաղաքացիական և զինվորական անձնակազմի (ներառյալ ղեկավար պաշտոններում) համապատասխան համաձուլումը
Գործող. 2	Ապահովել կառավարության առավելագույն թափանցիկություն՝ պաշտպանական քաղաքականության, պաշտպանական բյուջետավորման և Զինված ուժերում մարդու իրավունքների հարցերում
Գործող. 3	Ոստիկանության համակարգում քաղաքացիական հատուկ ծառայության ներդրում Որակավորման դասընթացների կազմակերպում Հատուկ քաղաքացիական ծառայության պաշտոններին փոխակերպվող անձնակազմի համար
1.4.3	**Զարգացնել մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կարողությունները՝ կապված ռազմական և անվտանգության ոլորտներում մարդու իրավունքների պաշտպանության հետ**
Գործող. 1	Ընդլայնել համագործակցությունն ու փորձի փոխանակումը ՆԱՏՕ-ի և Գործընկեր երկրների զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության համար պատասխանատու գործակալությունների հետ: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ռազմական և զինծառայողների հարցերով զբաղվող աշխատակիցների մասնագիտական գիտելիքների որակը բարձրացնելու, ինչպես նաև միջազգային փորձին հաղորդակից դարձնելու նպատակով ապահովել մասնագետների ներգրավվածությունը տարբեր ուսուցողական սեմինարներին, կոնֆերանսներին և գիտաժողովներին, որոնք կազմակերպվում և անցկացվում են ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում
Գործող. 2	Զինծառայողների համար հիմնել և անցկացնել կրթական ծրագրեր, որպեսզի ապահովվի, որ զինծառայողները

	լիարժեքորեն տեղյակ լինեն իրենց իրավունքներին ու պարտականություններին, ինչպես նաև մարդու իրավունքների ոտնահարման դեպքում դրանց փոխհատուցման միջոցներին, այդ թվում Մարդու իրավունքների պաշտպանի միջոցով
Գործող. 3	Միջոցներ ձեռնարկել Զինված ուժերի բնագավառում մարդու իրավունքների հարցերով փորձագետների քանակի ավելացման ուղղությամբ, որը կնպաստի այդ բնագավառում աշխատանքի արդյունավետությանն ու ժամանակին արձագանքմանը

1.5 Պայքար ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ, կիբերպաշտպանություն

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
1.5.1	**Բարձրացնել ահաբեկչության դեմ պայքարի Հայաստանի կարողությունները**
Գործող. 1	Բարելավել միջգերատեսչական համագործակցությունը ահաբեկչության դեմ պայքարի հարցում՝ կենտրոնանալով կառուցվածքային առօրյա համագործակցության վրա
Գործող. 2	Բարձրացնել ահաբեկչության դեմ պայքարի և ահաբեկչության հետևանքների կառավարման ազգային կարողությունները: Նախատեսել ՆԱՏՕ-ի կողմից հայկական կողմին ահաբեկչության դեմ պայքարի պետական մարմինների և համապատասխան ստորաբաժանումների աշխատանքին վերաբերող մեթոդական ձեռնարկների և այլ գրականության տրամադրում Հայաստանի ահաբեկչության դեմ պայքարի պետական գերատեսչություններին և համապատասխան ստորաբաժանումներին: Մասնագիտական դասընթացների կազմակերպում՝ Հայաստանի հակաահաբեկչական օպերատիվ և օպերատիվ-մարտական ստորաբաժանումների աշխատակիցների համար
Գործող. 3	Կենսագործել միջազգային հակաահաբեկչական կոնվենցիաները և միջազգային այլ համապատասխան իրավական գործիքները
Գործող. 4	Ահաբեկչության կանխարգելման և դրա դեմ պայքարի նպատակով, բարելավել միջազգային համագործակցությունը ՆԱՏՕ-ի և այլ միջազգային կազմակերպությունների հետ ընդարձակ փոխգործակցության միջոցով
1.5.2	**Նպաստել Ահաբեկչության դեմ պայքարի Գործընկերության գործողության ծրագրի շրջանակներում իրականացվող ԵԱԳԽ հակաահաբեկչական միջոցառումների իրականացմանը**
Գործող. 1	Պահպանել կապը և իրականացնել տեղեկատվության փոխանակում ՆԱՏՕ-ի հետ Կապի հետախուզական միավորի/ԿՀՄ/ միջոցով:
Գործող. 2	Մեծացնել Հայաստանի գիտական շրջանակների և փորձագիտական խմբերի ներդրումը ահաբեկչության դեմ պայքարին՝ համագործակցելով Գիտություն հանուն խաղաղության և անվտանգության ծրագրի շրջանակներում
1.5.3	**Ընդարձակել Հայաստանի կարողությունները զանգվածային ոչնչացման զենքի և դրանց մատակարարման**

	միջոցների հակազդեցության նպատակով
Գործող. 1	Համագործակցել և աջակցել զանգվածային ոչնչացման զենքի և դրանց մատակարարման միջոցների հակազդեցությանը միջազգային զինաթափման և չտարածման վերաբերյալ պայմանագրերին և համաձայնագրերին լիարժեք համապատասխանելիության և դրանցից բխող պարտավորությունների ազգային իրականացման միջոցով
1.5.4	**Բարձրացնել կարևոր նշանակության կապի և տեղեկատվական համակարգերը կիբեր հարձակումներից պաշտպանելու Հայաստանի կարողությունները՝ ներառյալ միջազգային համագործակցությանը նպաստելու միջոցով**
Գործող. 1	Ուժեղացնել Հայաստանի հայեցակարգային և իրավական հիմքերը ամրապնդելու կիբեր անվտանգությունը. Ընդունել և իրականացանել ահաբեկչության դեմ պայքարի Հայաստանի ազգային ծրագիրը
Գործող. 2	Ուսումնասիրել լիազորված և գործող Համակարգչային անվտանգության պատահարների արձագանքման թիմ ստեղծելու հնարավորությունները
Գործող. 3	Բարձրացնել քաղաքացիական հաղորդակցության ենթակառույցների դեմ կիբեր հարձակումների և տեղեկատվական պատերազմի հետևանքները կառավարելու կարողությունները
Գործող. 4	Ներդաշնակեցնել ազգային օրենսդրությունը կիբերտարածքին առնչվող միջազգային իրավական նորմերի հետ
Գործող. 5	Կատարելագործել ազգային կարողությունները միջազգային համագործակցությանը մասնակցության միջոցով, ներառյալ՝ ՆԱՏՕ-ի տեղեկատվական հավաստագրման գիտաժողովին, Օբերամերգաուի ՆԱՏՕ-ի դպրոցում կապի և տեղեկատվության համակարգերի ոլորտում, Լատինայում ՆԱՏՕ-ի կապի և տեղեկատվության համակարգերի դպրոցում առկա դասընթացներին, ինչպես նաև կիբեր պաշտպանության Տալինի գերազանցության կենտրոնի տարեկան միջազգային գագաթաժողովին մասնակցության միջոցով
Գործող. 6	Հաստատել հասարակության պետական և մասնավոր հատվածների գործընկերություն՝ կիբեր հարձակումներին արձագանքելու և կանխարգելելու ջանքերին աջակցելու նպատակով
Գործող. 7	ՀՀ կիբերպաշտպանության շրջանակները, նպատակները, կիբերպաշտպանության կարևոր օբյեկտները, կիբերանվտանգության ապահովման անհրաժեշտ ռեսուրսները /ուժերն ու միջոցները/, անհրաժեշտ քաղաքականության կոնկրետ ընթացակարգերը, պետական կառավարման և մասնավոր հատվածի հետ հարաբերությունները, կիբերանվտանգության նորմերի մշակման և ներդրման եղանակները, անվտանգության կանոնները, օրենսդրական մեխանիզմները, համադրելիության ապահովումը ուսումնասիրելու և սահմանելու նպատակով գործընկեր պետությունների փորձի ձեռքբերում: Կիբերանվտանգության սպառնալիքների հայտնաբերման և նախազգուշացման նպատակով՝ ՀՀ ԱԱԾ-ում ցանցային մոնիտորինգի համակարգերի ներդրման, ինչպես նաև հայտնաբերված սպառնալիքների արձագանքման ընթացակարգերի մշակում: ՀՀ ԱԱԾ-ում կիբերանվտանգության խնդիրները համակարգող կառույցի ստեղծում, որը կիրականացնի նաև համակարգչային պատահարների արագ արձագանքման գործառույթները: Այդ նպատակով անհրաժեշտ

	մասնագիտական ռեսուրսների հնարավորությունների բարելավում և վերազինում
1.5.5	**Շարունակել զարգացնել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ օրենսդրությունը**
Գործող. 1	Ձեռնարկել հետագա գործողություններ փողերի լվացման դեմ օրենսդրությունը և կարողությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ
Գործող. 2	ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1373 բանաձևի համաձայն, ձեռնարկել գործնական քայլեր ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման, ներառյալ ռիսկի լիարժեք գնահատման ուղղությամբ
1.5.6	**Ընդլայնել Հայաստանի կարողությունները մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ և կազմակերպված հանցավորության դեմ պայքարում**
Գործող. 1	Կատարելագործել կազմակերպված հանցավորության դեմ պայքարի օրենսդրությունը և ապահովել դրա արդյունավետ իրագործումը
Գործող 2	Շարունակել Հանցավորության դեմ պայքարի ոլորտում ազգային միջոցառումները բարելավելու նպատակով Գործողությունների ծրագրի իրականացումը
Գործող. 3	Շարունակել մարդկանց շահագործման/տրաֆիկինգի/ դեմ պայքարի ՄԱԿ-ի անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի և Եվրոպայի Խորհրդի մարդկանց շահագործման/տրաֆիկինգի/ դեմ կոնվենցիաների համաձայն Գործողությունների ծրագրի իրականացումը
Գործող. 4	Առավել կատարելագործել խաղաղապահ ուժերի կրթական ծրագիրը՝ թրաֆիքինգի դեմ պայքարի և այդ գործում նրանց դերի ու պարտականությունների վերաբերյալ՝ հաշվի առնելով ՆԱՏՕ/ԵԱԳԽ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի քաղաքականությունը

1.6 Սահմանային անվտանգություն

Նպատակներ, գործողություններ	**Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ**
1.6.1	**Սահմանային անվտանգության կառավարում**
Գործող. 1	Սահմանային անվտանգության ռազմավարության գործողությունների ծրագրի համապարփակ իրականացում
Գործող. 2	Ընդլայնել սահմանային անվտանգության ոլորտում համագործակցությունը Վրաստանի հետ
Գործող. 3	Ակնկալել օժանդակություն և խորհրդատվություն Դաշնակիցներից և Գործընկերներից իրականացնելու սահմանային անվտանգության կառույցում առկա ընթացակարգերի և պրակտիկայի վերանայում և անհրաժեշտ առաջնային սարքավորումների գնահատում և ապահովել առաջարկներ սահմանային անվտանգությունը բարելավելու համար
Գործող. 4	Այդ հետազոտման արդյունքների հիման վրա որոշել սահմանային անվտանգության արդյունավետության

	բարձրացման համար փոփոխման ենթակա ընթացակարգերն ու պրակտիկան: Նույն հետազոտման հիման վրա որոշել առաջնային, այդ թվում ՀՈՀ բաղկացուցիչների հայտնաբերման սարքավորումները, որոնք անհրաժեշտ է արդիականացնել կամ ձեռք բերել՝ սահմանային անվտանգության կատարելագործման նպատակով
Գործող. 5	Փոփոխել ընթացակարգերն ու պրակտիկան և կազմել առաջնային համարվող սարքավորումների արժեքի մոտավոր հաշվարկներ և անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման գործում օժանդակության համար դիմել Դաշինքի անդամ կամ գործընկեր երկրներին, կամ օգտագործել ազգային միջոցները
Գործող. 6	Սահմանային անվտանգության անձնակազմի համար լեզվի ուսուցում
Գործող. 7	Սահմանային անվտանգության հարցերին նվիրված ՆԱՏՕ/ԵԱԳԽ սեմինարի կազմակերպում՝ տեղեկատվության հավաքման, ռիսկերի վերլուծության և ռեսուրսների տեղակայման խնդիրների վերաբերյալ
Գործող. 8	Կատարելագործել անձնակազմի կառավարումը և հավաքագրումը պրոֆեսիոնալ ուժեր պահելու համար և հատկանշել լավագույն ներուժով այն անձանց, ովքեր կաջակցեն ռազմավարության իրականացմանը
Գործող. 9	Ապահովել անձնակազմի հասանելիությունը անգլերեն լեզվով կազմակերպվող դասընթացներին՝ հնարավորություն ընձեռելով նրանց մասնակցել օտարերկրյա դասընթացներին
Գործող. 10	Մշակել վերապատրաստման դասընթացի ծրագիր համապատասխան օղակների համար, որը լիարժեք կաջակցի նոր հաստատված ռազմավարությանը

1.7 Տնտեսական զարգացում և քաղաքականության առաջնահերթություններ

Նպատակներ, գործողություններ	**Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ**
1.7.1	Նպաստել կայուն, հուսալի և կենսունակ տնտեսության զարգացմանը
Գործող. 1	Կանխել պետական ֆինանսական ռեսուրսների անհարկի օգտագործումը, ներառյալ պաշտոնական դիրքի չարաշահումը
Գործող. 2	Հարկային և մաքսային վարչարարության արդյունավետ բարեփոխումների միջոցով ստեղծել նպաստավոր գործարար միջավայր՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների ավելի մեծ ծավալներ ապահովելու նպատակով
Գործող. 3	Տարածաշրջանային էներգետիկ ծրագրերին մասնակցության միջոցով ձգտել էներգետիկ ռեսուրսների հասանելիությանը. - Վրաստանի հետ 400 կվ էլեկտրահաղորդման բարձրավոլտ գծերի կառուցում, որը կնախապատրաստի Սևծովյան երկրների օղակաձև էլեկտրաէներգետիկ համակարգի ձևավորմանը; - Հայաստանի աշխարհագրական դիրքի ներուժի նպաստավոր օգտագործում միջազգայնորեն շահավետ վառելիքաէներգետիկ պաշարների տարանցման նպատակով, արդիականացնելով ու ընդլայնելով ստորգետնյա գազապահեստարանները նոր նախագծերի իրականացման և ԵՄ ներքին շուկաներին

	ինտեգրման նպատակով
Գործող. 4	Էներգիայի աղբյուրների մատակարարումների բազմազանություն. էներգիայի նորացված աղբյուրների հետագա զարգացում
Գործող. 5	Հետամուտ լինել Հարավային Կովկասի տրանսպորտային ուղիների բացմանը և լիարժեք շահագործմանը
Գործող. 6	Ցամաքային նոր տարանցման ուղիների կառուցում

1.8 Համագործակցություն այլ միջազգային կազմակերպությունների հետ

Նպատակներ, գործողություններ	**Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ**
1.8.1	**Նախապատրաստվել և քայլեր ձեռնարկել Եվրոպական Միության հետ ավելի սերտ ինստիտուցիոնալ և իրավական համատեղելիության ուղղությամբ՝ Արևելյան Գործընկերության շրջանակներում և համաձայնեցման ենթակա Ասոցացման համաձայնագրի լիարժեք օգտագործման միջոցով**
Գործող. 1	Հետամուտ լինել ԵՄ հետ Ասոցացման Համաձայնագրի՝ ներառյալ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու և մուտքի արտոնագրի դյուրացման շուրջ բանակցությունների առաջխաղացմանը
Գործող. 2	Սկսել և ավարտին հասցնել մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրացման և ռեադմիսիայի վերաբերյալ պայմանագրերը ԵՄ հետ
Գործող. 3	Շարունակել սերտ աշխատանքը ԵՄ իրավական խորհրդատվական թիմի հետ
1.8.2	**Քաջալերել Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների գործողությունների փոխլրացումը, նվազեցնել և կանխել կրկնորդումն ու համընկնումը**

Գլուխ 2. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Նպատակներ, գործողություններ	**Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ**
2.1.	**Զինված ուժերում ներքին ընթացակարգերի օպտիմալացում՝ ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան**
Գործող. 1	Կիրառել Զինվորական կարգապահական կանոնադրությունը՝ իրազեկման արշավի և համապատասխան ինստիտուցիոնալ ու կարգավորող փոփոխությունների իրականացման միջոցով
Գործող. 2	Հայաստանի ռազմական ոստիկանության համար հետամուտ լինել ԳԻԽ շրջանակներում միջազգային

	համագործակցության հնարավորություններին՝ ի աջակցություն Զինվորական կարգապահական կանոնադրության կիրառմանը
Գործող. 3	Քաջալերել քաղաքացիական հասարակության ներգրավումը պաշտպանական և անվտանգության հարցերում
2.2.	**Ազգային անվտանգության քաղաքականության և դրան առնչվող փաստաթղթերի մշակում**
Գործող. 1	Ռազմավարական փաստաթղթերի վերանայում՝ սպառնալիքների գնահատման նորացված եզրակացություններին համապատասխան
2.3	**Մեկնարկել Պաշտպանության ռազմավարական վերանայման իրականացման փուլը**
Գործող. 1	Սպառնալիքների նորացված գնահատման հիման վրա ավարտել Պաշտպանության ռազմավարական վերանայման իրականացումը, սահմանելով ԶՈՒ կառուցվածքը, ենթակառույցները (ռազմակայաններ, օդանավակայաններ, շտաբեր), խնդիրները, սպառազինությունն ու ռազմական տեխնիկան (ՍՌՏ)՝ հաշվի առնելով ռազմավարական միջավայրը, սպառնալիքների գնահատումը և առկա ռեսուրսները: Մեկնարկել Պաշտպանության ռազմավարական վերանայման իրականացումը. Ազգային ժողովը և միջգերատեսչական հանձնաժողովը պետք է իրազեկվեն վերանայման առաջընթացի և դրա իրականացման մասին
Գործող. 2	Պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքների իրականացմանը զուգահեռ ներդնել մեխանիզմներ՝ ԶՈՒ անձնակազմը պլանավորված վերափոխումների ու օպտիմալացման, ինչպես նաև համակարգում դրանց ազդեցության վերաբերյալ իրազեկված պահելու նպատակով
2.4	**Պաշտպանական պլանավորում և բյուջետավորում**
Գործող. 1	Վերջնականացնել պլանավորման և բյուջետավորման համակարգի ներդնումը՝ առավել թափանցիկ և բարելավված աուդիտի և հաշվապահական գործընթացների աջակցությամբ, անցկացնել փորձաշրջան և վերջնականացնել նոր համակարգի իրականացումը: Պլանավորման համակարգը պետք է նաև նպատակաուղղվի ավելի կայուն պլանավորման հիմքերի ստեղծմանը և պետք է հիմնվի հուսալի ֆինանսական պլանավորման վրա, ներառյալ կենսաշրջանի ծախքորոշման մեթոդաբանությունը
Գործող. 2	Բարելավել ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմավարական պլանավորման վարչության վերլուծական և պլանավորման կարողությունները՝ արտերկրում անձնակազմի վերապատրաստման, ինչպես նաև նպատակային ուղղվածության խորհրդատվական ու փորձագիտական խմբերի Հայաստան այցերի միջոցով: Ստեղծել պաշտպանական պլանավորման օղակ, որը պատասխանատու կլինի երկարաժամկետ պլանավորման, ինչպես նաև ՍՌՏ ձեռքբերումները հիմնավորող պահանջագրի հայտերի մշակման համար: Նախարարությունում ստեղծել ներքին մեխանիզմ՝ մշակելու, համաձայնեցնելու և հաստատելու տարեկան պաշտպանական պլանը, որը կաջակցի հաստատված երկարաժամկետ պլանի իրականացմանը
Գործող. 3	Բարելավել հասարակության աջակցությունը Պաշտպանության ռազմավարական վերանայման տարբերակներին՝ պաշտպանական բյուջեի հաստատման գործընթացի թափանցիկությունը բարելավելու միջոցով
2.5	**Զորահավաքային համակարգ և պահեստազորի վերապատրաստում**

Գործող. 1	Պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքների հիման վրա վերանայել և ադապտացնել ներկայիս զորահավաքային համակարգը՝ դրա արդյունավետության բարձրացման և ծախսերի նվազեցման նպատակով
Գործող. 2	Պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքների հիման վրա վերանայել պահեստազորի թվաքանակը և դասակարգումը, ինչպես նաև սահմանել յուրաքանչյուր կարգի համար պահանջվող ՍՌՏ և ուսուցման ծախսերն ու օգուտները: Աջակցությ ան հետամուտ լինել դաշնակիցներից և գործընկերներից՝ սույն վերանայմանը սատարելու նպատակով
2.6	**Ռազմական փոխգործունակություն**
2.6.1	**Մեկ խաղաղապահ բրիգադի կազմավորում՝ ՆԱՏՕ-ի չափորոշիչների օգտագործմամբ**
Գործող. 1	Ստեղծել մեկ խաղաղապահ բրիգադ՝ օգտագործելով ՆԱՏՕ-ի չափարոշիչները, մինչև մեկ գումարտակ (մարտական և մարտական ծառայությունների /թիկունքային/ ապահովմամբ) տեղակայելու և ինքնաբավ պահպանելու կարողություններ ունենալու նպատակով
Գործող. 2	Ներդնել մեխանիզմներ՝ ՆԱՏՕ-ի ղեկավարած գործողությունների համար հայտարարված ստորաբաժանումներում ՆԱՏՕ-ի չափորոշիչների կիրառումն ապահովելու նպատակով
Գործող. 3	Ավարտել թեթև շարժական բուժկայանի կազմավորման աշխատանքները՝ ներքին աղետներին արձագանքելու, տեղակայված ուժերին օժանդակելու կամ ի աջակցություն միջազգային գործողություններին՝ առանձին տեղակայվելու նպատակով
Գործող. 4	Այս ստորաբաժանումների կազմավորման և ուսուցման ընթացքում ձեռք բերված փորձն օգտագործել որպես կատալիզատոր՝ ուսուցման կատարելագործման և անհրաժեշտության դեպքում՝ ԶՈՒ այլ ստորաբաժանումների աստիճանական վերափոխման ապահովման համար:
Գործող. 5	Ապահովել խաղաղապահ բրիգադի մեկ գումարտակի և դրա մարտական և մարտական ծառայությունների ապահովման ստորաբաժանումների՝ ՕԿՀ 2-րդ մակարդակի ՆԱՏՕ-ի կողմից գնահատումը և հավաստագրումը
2.6.2	**Զորավարժությունների և գործողությունների օպերատիվ պլանավորում**
Գործող. 1	Հետամուտ լինել օժանդակության օպերատիվ և զորավարժությունների պլանավորման մասնագետների վերապատրաստման գործում՝ գործողություններին զորքերի պատրաստմանը և նախապատրաստմանն աջակցելու նպատակով
Գործող. 2	Օպերատիվ և զորավարժությունների պլանավորման, շտաբային աշխատանքի միջազգային փորձի ձեռքբերման նպատակով ՆԱՏՕ-ի Գործընկերության շտաբային հաստիքներում նշանակել սպաներ
2.7	**Անձնակազմի ուսուցում և կառավարում**
2.7.1	**Կրթական համակարգի վերանայում**
Գործող. 1.	Շարունակել կրթական համակարգի վերանայման գործողությունների պլանի առաջնահերթությունների իրականացումը
Գործող. 2.	Ներդնել ռազմակրթական հայեցակարգը
Գործող. 3.	«Քաղված դասերի» կարողության ստեղծում՝ Կոսովոյում և Աֆղանստանում տեղակայումներից քաղված դասերի լիարժեք

	օգտագործման նպատակով
Գործող. 4.	Մանրակրկիտ մշակել հրամանատարաշտաբային ակադեմիայի ռազմական կրթության ուսումնական ծրագիրը, ձևավորել դասախոսական կազմը
Գործող. 5.	Ռազմական ինստիտուտում կրտսեր սպայակազմի դասընթացների ուսումնական ծրագրի և դասախոսական ու հրահանգչական կազմի վերանայում և կատարելագործում
Գործող. 6.	Մանրակրկիտ մշակել պայմանագրային սերժանտական ու ենթասպայական կազմի մասնագիտական զարգացման կենտրոնի ռազմական կրթության ուսումնական ծրագիրը, ձևավորել դասախոսական կազմը
Գործող 7.	Ազգային կրթական համակարգում ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի ինտեգրման նպատակով իրագործելիության բացահայտման միջգերատեսչական ուսումնասիրության անցկացում և երկարաժամկետ պանի մշակում՝
Գործող 8	Բացահայտել երկրի ներսում և արտերկրում քաղաքացիական անձնակազմի վերապատրաստման հնարավորությունները: Մշակել ուսումնական դասընթացներ քաղաքացիական անձնակազմի համար, առաջնահերթությունը տալով նրանց, ովքեր պետք է ծառայեն ՊՆ ֆինանսաբյուջետային պլանավորման և պաշտպանական քաղաքականության վարչություններում
Գործող 9.	Էլեկտրոնային հեռավար /տարաբաշխված/ ուսուցման կարողությունների զարգացում
2.7.2	**Զորատեսակների պատրաստության և կիրառման տեսություն և ընթացակարգեր**
Գործող. 1.	Պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքների, ռազմակրթական հայեցակարգի և քաղված դասերի հիման վրա՝ ԶՈՒ տարբեր զորատեսակների համար մշակել պատրաստության և կիրառման տեսություն և ընթացակարգեր՝
Գործող. 2.	ԶՈՒ տարբեր զորատեսակների պատրաստության և կիրառման տեսության և ընթացակարգերի, քաղված դասերի հիման վրա մշակել Գումարտակի մակարդակի և համազոր ռազմաօդային և ՀՕՊ ուժերի ուսումնական ծրագրեր
Գործող. 3	Կատարելագործել ուսումանկրթական հաստատությունների ուսումնական ծրագրերում ներառված՝ Միջազգային հումանիտար իրավունքին առնչվող գործնական հրահանգները
2.7.3	**Քաղաքացիական և զինվորական անձնակազմի կառավարման համակարգի բարեփոխում**
Գործող. 1.	Գործող համակարգի կատարելագործման նպատակով հետամուտ լինել խորհրդատվության որոշակի հաստիքներում պարտականությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման և ուսուցման վերաբերյալ (արտերկրում կազմակերպվելիք ուսուցումը ներառյալ): Յուրաքանչյուր հաստիքի համար պաշտոնի հստակ նկարագրի, յուրաքանչյուր հաստիքում և կոչումում ծառայության տևողության, նախքան թոշակավորումը կամ նոր նշանակում ստանալը տվյալ պաշտոնում ծառայության տևողության, ինչպես նաև՝ նախքան զորացրումը ծառայողական առաջխաղացման բացակայության դեպքում ծառայության տևողության վերաբերյալ դրույթների սահմանում
Գործող. 2.	Շարունակել վերանայել ու կատարելագործել ստանդարտ ֆինանսական բավարարման դասակարգումը՝ ըստ կոչումների

	(զինվորական և քաղաքացիական անձնակազմերի համար): Սահմանել նաև հատուկ որակավորումների առկայության կամ պարտականությունների կատարման դեպքում հավելավճարների հատկացման սանդղակ: Մշակել գործառույթների համար կրթական և ուսումնական պահանջներ, որոնց շնորհիվ կապահովվի զինվորական որակավորումների ճանաչումը քաղաքացիական կրթահամակարգում: Սահմանել զորացրման, վերաբնակության և զորացրված անձնակազմի սոցիալական ապահովման (այդ թվում կենսաթոշակների) իրականացման ընթացակարգեր
Գործող. 3.	Կատարելագործել անձնակազմի համապատասխան փորձի և հմտությունների բացահայտման գործող համակարգը՝ երաշխավորելով լավագույն որակավորված անձնակազմի նշանակումը պատշաճ պաշտոններին
Գործող. 4.	Կատարելագործել սպաների, սերժանտների, զինվորների և քաղաքացիական անձնակազմի արդար և թափանցիկ գնահատման գործող համակարգը, որպես ծառայողական առաջխաղացման պահանջներին բավարարող անձանց ընտրության հիմք: Այս համակարգն անձին թույլ կտա ըմբռնել իրենից ակնկալվող որակների և հմտությունների զարգացման համար անհրաժեշտ սեփական գործողությունները:
2.7.4	**Լեզվի ուսուցում**
Գործող. 1.	Կատարելագործել լեզվի ուսուցման կարողությունները
Գործող. 2.	Կատարելագործել լեզվի և ռազմական տերմինաբանության ուսուցումը խաղաղապահ ստորաբաժանումում
Գործող. 3.	Անձնակազմի համար լեզվի լրացուցիչ ուսուցման նպատակով շարունակել օգտագործել երկկողմ օժանդակությունը
Գործող. 4.	Կատարելագործել դասախոսների որակավորումը և հիմնել լեզվի ուսուցման/թեստավորման կենտրոն: Երաշխավորել կրթված և փորձառու գնահատողների առկայությունը:
Գործող. 5.	Շարունակել ՆԱՏՕ-ի հետ համագործակցության հարցերում ներգրավված ավագ սպայակազմի, ներառյալ գեներալների լեզվի մասնագիտացված ուսուցման դասընթացները:
Գործող. 6.	Դասընթացների կատարելագործման նպատակով հզորացնել կառավարչական և որակի երաշխավորման միջոցառումները: Պահպանել լեզվի լաբորատորիաների կարողությունները, ուսուցման ու տեստավորման չափանիշները, միևնույն ժամանակ շարունակելով դասախոսների որակավորման խորացումը: Այս միջոցառումները պետք է ապահովված լինեն անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով:
2.7.5	**Զինված ուժերի զորացրված զինվորական անձնակազմի քաղաքացիական վերապատրաստում և վերաինտեգրում**
Գործող. 1	Ուսումնասիրել Զինված ուժերի զորացրված զինվորական անձնակազմի քաղաքացիական վերապատրաստմանը և վերաինտեգրմանն ուղղված “Վստահության հիմնադրամի” ստեղծման նպատակահարմարությունը
2.8	**Ղեկավարման, կառավարման և նյութատեխնիկական ապահովման երկարաժամկետ պլաններ**
Գործող. 1	Օգտագործելով Պաշտպանության ռազմավարական վերանայման (ՊՌՎ) արդյունքները՝ կազմել ղեկավարման, կառավարման և կապի (C3) երկարաժամկետ պլանը և C3 համակարգերի կառուցվածքը (ներառյալ կապի, տեղորոշման և հատկանշման համակարգերը, ինչպես նաև ավտոմատացված տեղեկատվական համակարգերը և դրանց գործառութային ծառայությունները)՝ ՊՌՎ ընթացքում բացահայտված օպերատիվ պահանջմունքը բավարարելու նպատակով: Այս նպատակին հասնելու համար Հայաստանը կաջակցի ՆԱՏՕ-ի ղեկավարման, կառավարման և կապի հանձնաժողովի

	(NC3B), ՆԱՏՕ-ի ցանցային օժանդակող կարողության (NNEC), ինչպես նաև փոխգործունակության ենթակոմիտեների գործունեությանը: Հայաստանը կմասնակցի նաև ՆԱՏՕ-ի և կոալիցիայի շրջանակներում կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների (CIS) փոխգործունակության թեստավորման միջոցառումներին, ինչպես նաև հետամուտ կլինի ՆԱՏՕ-ի ղեկավարման, կառավարման և կապի գործակալության (NC3A) մասնագիտական աջակցությանը:
Գործող. 2	Օգտագործելով ՊՌՎ-ի արդյունքները՝ զարգացնել երկարաժամկետ նյութատեխնիկական (ներառյալ բժշկական) ապահովման պլան, որն անհրաժեշտ է ՊՌՎ ընթացքում բացահայտված օպերատիվ պահանջմունքը բավարարելու համար:
Գործող. 3	Քայլ առ քայլ իրականացնել անհրաժեշտ ՍՌՏ ձեռքբերում և արդիականացում՝ յուրաքանչյուր փուլում ցուցաբերելով կարողություն և փոխգործունակություն:
2.9	**Ազգային ռազմարդյունաբերության համակարգը և պաշտպանությանը դրա համապատասխանությունը**
Գործող. 1	ՀՀ ռազմարդյունաբերության բարեփոխումների և զարգացման հայեցակարգի դրույթների իրականացում՝ առկա ռազմարդյունաբերության համակարգի վերակազմավորման նպատակով
Գործող 2.	Ռազմարդյունաբերության համակարգում թողարկված արտադրանքի և մատուցված ծառայությունների ստանդարտացում, ՍՌՏ արժեքային արդյունավետության ապահովման և կենսաշրջանի կառավարման մեխանիզմների ներդրում:
Գործող 3.	ՆԱՏՕ-ի անդամ երկրների հետ ռազմարդյունաբերական ոլորտում համագործակցության իրականացում
Գործող 4.	ՆԱՏՕ-ի անդամ երկրների և Դաշինքի ռազմական նշանակության արտադրանքի ստանդարտացման և միօրինականացման համակարգին ծանոթացում՝ ապագայում ռազմատեխնիկական համագործակցություն իրականացնելու և ՀՀ ԶՈՒ կարիքների համար ՍՌՏ ձեռքբերումների աղբյուրները դիվերսիֆիկացնելու նպատակով:

Գլուխ 3. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

3.1. Հասարակական տեղեկատվություն անվտանգության և պաշտպանության վերաբերյալ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
3.1.1.	**Մշակել Ազգային տեղեկատվական ռազմավարություն Հայաստան-ՆԱՏՕ գործողության պլանի վերաբերյալ՝ ի աջակցություն պաշտպանական և անվտանգության բարեփոխումների**
Գործող. 1	Իրականացնել տեղեկատվական արշավ: Միջգերատեսչական հանձնաժողովում ստեղծել հասարակական տեղեկատվության հատուկ հանձնախումբ: Կանոնավոր կերպով պատրաստել և հեռարձակել ռադիո-հեռուստատեսային հաղորդումներ ՆԱՏՕ-ի, հատկապես Դաշինքի կողմից ղեկավարվող գործողությունների վերաբերյալ
3.1.2	**Ընդլայնել հանրային իրազեկությունը ՆԱՏՕ-ի վերաբերյալ**

Գործող. 1	Շարունակել օժանդակությունը Երևանում ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոնին
Գործող. 2	ՆԱՏՕ-ի գրքերի ստենդերի բացում մարզերի համալսարաններում
Գործող. 3	ՆԱՏՕ-ի հանրային դիվանագիտության վարչության հետ համատեղ կազմակերպել սեմինարներ, աշխատաժողովներ և համաժողովներ՝ հատուկ ընտրված լսարանի համար (տեղական իշխանություններ, համալսարաններ, լրագրողներ, հասարակական կազմակերպություններ): Յուրաքանչյուր տարի Հայաստանում կազմակերպել «ՆԱՏՕ-ի շաբաթ» միջոցառում
Գործող. 4	Կազմակերպել հանրային միջոցառումներ/սեմինարներ, դասախոսություններ, հեռուստատեսային հաղորդումներ
Գործող. 5	Կազմակերպել սեմինար ռազմավարական հաղորդակցության վերաբերյալ

3.2. Գիտություն հանուն խաղաղության և անվտանգության

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
3.2.1.	**«Գիտություն հանուն խաղաղության և անվտանգության» ծրագրի շրջանակներում կազմակերպված միջոցառումների միջոցով արձագանքել անվտանգության կարևորագույն առաջնահերթություններին**
Գործող. 1	Շարունակել աշխատանքներն ազգային և տարածաշրջանային սեյսմիկ անվտանգության ոլորտում
3.2.2	**Արձագանքել հայ ազգային գիտական և տեխնոլոգիական առաջնահերթություններին՝ համագործակցության կոնկրետ միջոցառումների միջոցով**
Գործող. 1	Իրականացնել համագործակցության միջոցառումներ՝ կենտրոնանալով կենսաահաբեկչության սպառնալիքի վրա
Գործող. 2	Իրականացնել համագործակցության միջոցառումներ՝ Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների փորձագիտության ընդլայնման նպատակով

3.3. Քաղաքացիական ճգնաժամերի կառավարում և ճգնաժամային պատրաստականություն

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
3.3.1	**Բարելավել Հայաստանի ճգնաժամային կառավարման համընդհանուր կարողությունները և միջգերատեսչական համադրումը**
Գործող. 1	Մշակել արտակարգ իրավիճակների ազգային կառավարման հայեցակարգ և երաշխավորել համապատասխան օրենսդրական վարչական շարունակություն
Գործող. 2	Ստեղծել մշտական Իրավիճակային կենտրոն/ճգնաժամային կենտրոն բոլոր իրավասու գերատեսչությունների մասնակցությամբ, որը կառավարության համար կծառայի որպես ճգնաժամերին արձագանքման միջոց

Գործող. 3	Օգտագործելով Հայաստանի արտակարգ իրավիճակների կառավարման ուղեցույցի սկզբունքները՝ զարգացնել Ճգնաժամերի կառավարման կենտրոնի /ՃԿԿ/ հիմնադիր գործառնական հիմնադրույթները, որոնք կսահմանեն կենտրոնի գործառույթները և պահանջները
Գործող. 4	Հիմնվելով ռիսկերի ճիշտ գնահատման վրա՝ նորացնել և կատարելագործել ճառագայթային, քիմիական, կենսաբանական և միջուկային ճգնաժամերին, ինչպես նաև ահաբեկչական գործողություններին արձագանքելու միջգերատեսչական պլանները
Գործող. 5	Կատարելագործել գեո-տեղեկատվական համակարգի կարողությունները:
Գործող. 6	Կատարելագործել աղետների բժշկության փորձագիտական հնարավորությունները և կարողությունները: Շարունակել համատեղ ուսումնավարժանքների անցկացումը, հատկապես դաշտային վարժանքների ծրագրով, կազմակերպել աղետների բժշկության մասնագետների վերապատրաստման դասընթացներ հանրապետության ողջ տարածքում: ՆԱՏՕ-ի և Գործընկեր երկրների հետ բուժծառայությունների փոխհամագործակցության ծրագրերի մշակում՝ աղետների բժշկության գծով: Հայաստանի Հանրապետությունում Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնները ներդնելու ուղղությամբ համագործակցության ապահովում
Գործող. 7	Բարելավել աղետների արձագանքման ուժերի մասնագիտական կարողությունները և անգլերեն լեզվի ուսուցումը՝ համապատասխան միջազգային չափանիշներին հասնելու նպատակով:
Գործող. 8	Արտակարգ իրավիճակներում հասարակական տեղեկացվածության բարելավում
Գործող. 9	Վերոհիշյալ նպատակների իրականացման նպատակով ՆԱՏՕ-ից փորձագիտական աջակցության տրամադրում:
Գործող. 10	Զարգացնել որոնողական և փրկարարական թիմ՝ Միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (ՄՈՓԽԽ) ստանդարտները բավարարելու համար:
3.3.2.	**Կատարելագործել համաճարակային պատրաստվածությունը և արձագանքման կարողությունները**
Գործող. 1	Հզորացնել համաճարակային արձագանքման պլանավորման համակարգը և կարողությունները՝ ներառյալ կատարելագործելով սառեցնող սարքավորումները և վերապատրաստելով առողջապահական հաստատությունների անձնակազմը:
Գործող. 2	Հրատապ պատվաստումների համար բարելավել հատկապես Առողջապահության նախարարության կարողությունները:
3.3.3.	**«Հայաստանում ժամկետանց թունաքիմիկատների հաշվառում, մոնիտորինգ և վերլուծություն՝ դրանց էկոլոգիապես անվտանգ հեռացման նպատակով» ՆԱՏՕ-ի ԳԽԱ ծրագրի իրագործում**
Գործող. 1	Հիմնել վերլուծական լաբորատորիա:
Գործող. 2	Իոանինայի և Մասարիկի կրթական և գիտահետազոտական հաստատություններում հայ մասնագետների վերապատրաստում:
Գործող. 3	Թափոնակուտակիչների բնապահպանական կարգավորումը՝ դիոքսինների և ֆուրանների արտանետումների

	կանխարգելման նպատակով Աղբավայրերում թափոնների բաց ցածրաստիճան այրման դեպքում դիոքսինների և ֆուրանների արտանետումները վտանգ են ներկայացնում Հայաստանի Հանրապետության բնակչության համար, քանի որ պարբերաբար առաջացող ինքնաբերաբար այրումն ու մալմլումը հանգեցնում են դիոքսինների և ֆուրանների ոչ կանխամտածված առաջացմանը: Դիոքսինների և ֆուրանների ոչ կանխամտածված առաջացման աղբյուրների (կենցաղային թափոնների չհսկվող այրում, անտառային հրդեհներ, կենսազանգվածի այրում դաշտերում) հետ մեկտեղ գոյություն ունեն նաև այդ նյութերի արդյունաբերական արտանետումների աղբյուրներ (քիմիական, մետաղագործական արդյունաբերություն, հանքային հումքի, սպառողական ապրանքների արտադրություն): Առաջարկվող ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում դիոքսինների և ֆուրանների արտանետումների աղբյուրների բացահայտումը, արտանետումների քանակական գնահատումը, ըստ առաջնայնության դասակարգումը՝ նշված նյութերի արտանետումների կանխարգելման նպատակով:

Գլուխ 4 . ՎԱՐՉԱԿԱՆ, ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

4.1. Վարչական խնդիրներ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
4.1.1	**Համադրման, փոխգործողության և աջակցող ծրագրերի համահունչ ղեկավարման միջոցով ապահովել ԱԳԳԾ արդյունավետ իրագործում**
Գործող. 1	Համապատասխան մարմնի միջոցով ապահովել պատշաճ միջգերատեսչական համադրում:
Գործող. 2	Համապատասխան մակարդակներում ապահովել փոխգործակցություն ՆԱՏՕ-ի, ներառյալ ՆԱՏՕ-ի կապող օղակ հանդիսացող դեսպանության հետ և ապահովել պատշաճ աշխատանքային պայմաններ ՆԱՏՕ-ի փոխգործակցության սպայի համար:

4.2. Ռեսուրսներ

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
4.2.1.	**Ապահովել ԱԳԳԾ աջակցման ծրագրերի և միջոցառումների համապատասխան ֆինանսավորումը**
Գործող. 1	Սահմանել և հատկացնել համագործակցության այս ծրագրի իրականացման համար պահանջվող ֆինանսական ու մարդկային ռեսուրսները:

4.3. «Պաշտպանական անվտանգություն»

Նպատակներ, գործողություններ	Հայաստանի նպատակները, հատուկ պետական միջոցառումներ
4.3.1.	**Լիովին իրականացնել Հայաստանի կառավարության և ՆԱՏՕ-ի միջև ստորագրված անվտանգության վերաբերյալ համաձայնագիրը**
Գործող. 1	Երաշխավորել «Անվտանգության մասին» համաձայնագրով պահանջվող ՆԱՏՕ-ի անվտանգության նվազագույն չափանիշները: Տեղեկատվության հոսքին և պահանջներին համապատասխան շարունակել ընդլայնել գոյություն ունեցող ռեգիստրային համակարգը: Շարունակել սահմանել այն պաշտոնները, որոնց համար պահանջվում է ՆԱՏՕ/ԳԻԽ գաղտնիության թույլտվություն:
Գործող. 2	Ազգային անվտանգության ծառայության աշխատանքի կատարելագործման նպատակով ընդլայնել համագործակցությունն այլ երկրների համապատասխան ծառայությունների հետ: ՆԱՏՕ-ի գաղտնի տեղեկատվության հետ աշխատող հայ փորձագետների համար հիմնել ու իրականացնել անվտանգության վերաբերյալ կրթական և ուսումնական ծրագրեր՝ նպատակ ունենալով կատարելագործել ԱԱԾ ընդհանուր աշխատանքը:
Գործող. 3	Ստեղծել տեղեկատվության կրիպտոգրաֆիկ պաշտպանության էլեկտրոնային համակարգեր, ցանցեր և կապուղիներ: